

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆ

ՔԱՐՈԶ

ԽՈՍՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, «ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ» ԱՌԹԻՎ

(Կիրակի, 5 հունիս 1988 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (շարական):

«Եկեք կառուցենք սուրբ խորանը լույսի, որովհետև այստեղ ծագեց մեզ լույսը Հայաստան աշխարհում»:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Հայաստանյայց Եկեղեցին անցյալ շաբաթվա ընթացքում տոնախմբեց հիշատակը իր պանծալի սրբերի այն փաղանգի, որ շատ կարևոր դեր էր խաղացել, որպեսզի քրիստոնեական կրոնը վերջնականապես արմատավորվի Հայաստան աշխարհում: Անցյալ երկուշաբթի և երեքշաբթի օրերին Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի վանքերի խնկաբույր կամարների տակ տոնեցինք, հավատացյալ հոծ բազմության ներկայությամբ, հիշատակը Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերի, որոնք իրենց թանկ ու անմեղ արյունը թափեցին «սիրույն Քրիստոսի»: Հինգշաբթի օրը, ի հիշատակ Հովհաննու Կարապետի և Աթանագինյա եպիսկոպոսի, կատարեցինք տոնախմբություն Ս. Շողակաթի վանքում:

Ըստ Ագաթանգեղոսի և Բուզանդի, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Խորվիրապի բանտից ազատվելուց հետո ապրեց միառժամանակ Վաղարշապատ քաղաքում: Նաև մեծ մասամբ քարոզչությամբ և աղոթքով էր զբաղվում ու ամեն գիշեր քաղաքի շրջակայքում հսկում ու աղոթում էր: Մի գիշեր տեսիլքի մեջ նրա աչքերի առաջ բացվում են երկնքի դռները, և Աստվածորդին իջնում է Այրարատյան աշխարհ: Այդ տեսիլքի լույսը իբրև շողակաթ երկնքի վրա մնում է միառժամանակ իբրև աստվածային սիրո արտահայտություն և ապա գալիս ամփոփվում է այն վայրում, ուր այսօր կառուցված է հայ ժողովրդի սրբություն սրբոցը՝ Էջմիածինը: Այդ լույսը դառնալու էր հոգևոր այն կաթը, որով հայ ժողովուրդը սնվել ու սնվում է իր ողջ պատմության ընթացքում:

Երեկ, սիրելի հավատացյալներ, մեր Եկեղեցին տոնեց սուրբ Գրիգոր Լուսավորչի Խորվիրապի բանտից ելքի հիշատակը: Ինչպես մեր պատմիչներն են վկայում, նա Արտաշատի այդ բանտում ավելի քան տասներեք տարի արգելափակվել էր որպես մահապարտ: Նա գցվել էր այդ գուբը, որպեսզի թունավոր իժերն ու սողունները վերջ տային նրա կյանքին: Աստվածային հրաշքով, որին ոչ մի մարդկային միտք հասու չի կարող լինել, նա երկար տարիներ ապրեց այնտեղ: Ըստ սրտառուչ մի գրավոր ավանդության, ամեն օր Աստուծո հրեշտակը մի պառավ կնոջ կերպարանքով

որբին բերում էր մի ննկանակ հաց և մի փարչ ջուր, ու այդպիսով նա կարողանում էր գուբի մեջ իր գոյությունը պահպանել:

Ս. Գրիգոր, կամոքն Աստուծո, ապրեց Խորվիրապի գրում, որպեսզի կատարվեր հրաշքների մեծագույնը մեր երկրում: Գբից, այսինքն՝ մահվան գերեզմանից նրա հարությունն առնելը մեր ժողովրդի պատմության մեջ բացեց մի նոր դարագլուխ, մի նոր սկիզբ:

Հայոց թագավոր Տրդատ Գ-ն իր կատարած չարիքների համար պատուհասվեց, նմանվեց խոզի կերպարանքով մի վայրի գազանի և պալատը թողեց ու փախավ դեպի Երասխի ճահճուտները: Նրա քույր Խոսրովադուխտը երկնային միջամտությամբ մի երազ տեսավ, որով նրան հայտնըվեց, թե թագավորը կարող է բժշկվել միայն Խորվիրապի բանտարկյալի ձեռքով. որն արդեն իսկ մոռացության էր մատնվել: Անմիջապես Օտա իշխանի գըլխավորությամբ պատգամավորներ ուղարկվեցին Արտաշատ՝ Գրիգորին փնտրելու: Բանտապետն ու պահակները երկմտեցին Գրիգորի կենդանության մասին. երբ գբի բերանից ձայն տվեցին՝ կանչելով Գրիգոր... Գբի խորքից հողդողդ ձայնը Գրիգորի պատասխանեց, թե ողջ է: Պարան իջեցրին, Գրիգորը շարժեց այն իբրև կենդանության նշան: Նրան դուրս հանեցին գբից, լվացին նրա թույլ ու նկուն մարմինը, իշխանավայել զգեստներ գցեցին վրան և շտապ բերեցին Վաղարշապատ: Այստեղ Գրիգորը հավատով և երկյուղած աղոթքով բուժեց հայոց հիվանդ թագավորին:

Ի տես արքայի ապաքինման, նոր կրոնի հրով տոգորված արքայական ընտանիքը. ազնվականներն ու ամբողջ հայ ժողովուրդը դարձի եկան հեթանոսությունից ի քրիստոնեություն՝ մկրտությամբ:

Այսօր, սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, տոնն է կաթողիկե Սուրբ Էջմիածնի, այսինքն՝ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության հիմնադրության տոնն է: Որքան սրտառուչ է մեր Եկեղեցու հիմնադրության պատմությունը, և որքան հոգեզմայլ են նրա մանրամասները: Աշխարհի վրա քիչ ժողովուրդներ կան, որոնք այսքան փառավոր ավանդ ունեն իրենց Եկեղեցու հիմնադրության հետ առնչված: Մենք, իբրև քաղաքակիրթ մի ազգ, անհրաժեշտ է, որ խորապես գիտակցենք մեր անցյալի ժառանգության արժեքը, և գուրգուրանքով պահպանենք մեզ հասած ամեն մեկ դրվագն ու մանրամասնությունը մեր անցյալի պատմության:

Սուրբ Գրիգորի տեսիլքը հետևյալն է. նա ամեն գիշեր ուշ ժամերին դուրս էր գալիս Վաղարշապատի սահմաններից, առանձին գնում էր մոտակա դաշտերն ու հնձանները, այնտեղ երկար մտորում էր ծնրադիր, հսկում ու աղոթում: Հավանաբար այդ մտորումներն ու աղոթքները լոկ շնորհակալություն հայտնելու համար չէին, այն բանի համար, որ ինքն ազատվեց Խորվիրապի մահվան գբից, կամ այդ աղոթքները լոկ աղոթքներ չէին Աստծուն ուղղված՝ Հռիփսիմյանց ու Գայանյանց կույսերի անմեղ հոգիների լուսավորման և նրանց սպանիչների մեղքերի քավության համար: Այդ աղոթքները մի այլ խնդրանք, մի այլ հայց էին բովանդակում իրենց մեջ. դա տենչն էր սրբի հոգու, որ մարմնական բոլոր տեսակի տառապանքներից և ծանրություններից թեթևացած՝ ստացել էր մի տեսակ աննյութական բնություն իր չարչարանքների և զոհողության ճանապարհով: Ահա այս հոգին էր, որ ձգտում էր աստվածային տեսիլքին ու հայտնությանը, որը մեր կյանքում շատ քիչ մարդկանց է շնորհվել:

Եվ ի պատասխան իր ջերմ թախանձանքի, նա արժանանում է Աստվածորդու հայտնապես երևման՝ փառավոր տեսիլքի միջոցով:

Խոր գիշերվա խաղաղ ու լուռ պահին, երբ աշխարհն ամբողջ պարտասուն քնել էր, երբ նույնիսկ երկնքի աստղերն էին թալկացել, հանկարծ բացվում են երկնքի լուսաճաճանչ դռները, լույսի հեղեղ է հորդում այնտեղից, և այդ լույսի ճաճանչների միջից հայտնվում է Աստվածորդին՝ ոսկե ուռը ձեռքին: Հրեշտակների քաղցրաձայն երգասացությամբ իջնում է նա երկնքից երկիր, նախկին հեթանոսական տաճարի վրա, որտեղ կանգնել եք դուք այս պահին: Երեք անգամ խփում է դժոխքի փականներին իր ձեռքի մուրճով՝ ավելի ամրացնելու համար և այդպիսով սրբագործում էջքի վայրը ու ասում, ո րհենց այդ վայրում կառուցեն Իր համար մի աղոթքի տուն: Որքան հոգեթով, որքան զմայլելի է այս դըրվագը, որքան հուսատու և տոգորող ինչպես անցյալում, նույնպես և այսօր: Ահա այս սրբազան վայրն է, որ կոչվում է Էջմիածին, իբրև իջման վայրը Աստուծո միածին Որդու:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, հայ ժողովուրդը շուրջ հազար յոթը հարյուր տարի է, որ ավանդապահն է երկնատուր այս տեսիլքի: Թեև առաջին դարում Քրիստոսի սրբազան առաքյալներ Թադեոսն ու Բարթողիմեոսը նոր վարդապետության սերմերն արդեն ցանել էին հայոց աշխարհում, սակայն Սուրբ Գրիգորն էր, որ իր աննկուն հավատով և իր կրած ծանր չարչարանք-

ներով կարողացավ մեր մայր հողում՝ նետված քրիստոնեության այդ սերմերն աճեցնել և հայոց Տրդատ արքայի դարձով այն դարձնել պետական կրոն Հայաստանում:

Իբրև քրիստոնյա ժողովուրդ, անցյալում շատ ենք հալածվել և տառապել: Սակայն, իբրև քրիստոնյաներ, մեր իմացական ու հոգևոր հատկություններով միշտ էլ փայլել ենք մեր շրջապատում: Ամեն մեկ դժվարության պահին կարողացել ենք գտնել ելքի ճանապարհներ և որպես վիյունիկ հաճախ ենք հառնել մեր մոխիրներից: Հատկապես ներկա ամիսներին մեր ժողովուրդը հոգեկան տագնապալի վիճակ է ապրում: Մեր ժողովուրդը արդարության ծարավով սպասում է իր դարավոր իդեալների իրականացման:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, ամուր կանգնենք մեր նախնյաց հավատի վրա, հարատև աշխատենք վասն արդարության, աղոթենք սրտեռանդն, որ Աստված լսի մեր ձայնը, փափկացնի կարծրացած և ապար դարձած սրտերը ղեկավար մարդկանց, վերացնի ազգամիջյան անիմաստ ատելությունը և մեզ բոլորիս արժանի դարձնի հասնելու ու վայելելու մեր ազնիվ նպատակների իրականացումը: Մեր հավատի հայրը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, կարողացավ աղոթքով Աստվածորդուն իսկ Հայաստան աշխարհ իջեցնել: Նույն ճանապարհով, հոգևոր հրայրքով ասված աղոթքով, հատկապես մեր բոլորի կողմից համոզումով կատարված աղոթքով անպայման մեր վսեմ նպատակները կպսակվեն հաջողությամբ: Չլինենք թերահավատ:

Այս առթիվ հիշում եմ Ս. Ներսես Շնորհալու հետևյալ հոգեշունչ աղոթքը. «Իմաստություն Հոր՝ Հիսուս, տուր ինձ իմաստություն՝ բարին խորհելու ու խոսելու և գործելու ամեն ժամանակ: Չար խորհուրդներից, խոսքից ու գործից փրկիր ինձ և ողորմիր քո ստեղծածներին և ինձ՝ բազում մեղքեր ունեցողիս»: Ահա այսպիսին պետք է լինի մեր խոսելու, գործելու և մտածելու կերպը:

Մեր դարավոր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրության հիշատակության այս օրվա առթիվ մեր սրտագին մաղթանքն է, որ նախանձախնդրությունը, հավատը և զոհողության ոգին մեր եռամեծ հայրերի, որոնք իրենց արյան գնով կարողացան դնել մեր մայր Եկեղեցու հիմքերը, գա և բնակվի մեր մեջ՝ տալով մեզ ուժ, ներշնչանք և հայրենասիրություն, որպեսզի բոլորանվեր սրտով կարողանանք ծառայել Աստուծո փառքի, Հայաստանյայց Ս. Եկեղեցու պայծառության և մեր ժողովրդի հավերժացման համար:

«Եկեք կառուցենք սուրբ խորանը լույսի, որովհետև այստեղ ծագեց մեզ լույսը Հայաստան աշխարհում»:

Թող շնորհքը, սերն ու ողորմությունը մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի լինեն մեզ հետ այժմ և հավիտյան. ամեն: